

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՔԱՐԱՇԱՄԲԻ ԳԱՒԱԹԻ ՇԵՓՈՐՆԵՐՈՒՆ ԱՌԵՂԾՈՒԱԾԻՆ ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄԸ

ՀԱԻԷՆ ԿՆԵԱԶԵԱՆ

zavenkniasian@yahoo.com.ar

ՄՈՒՏՔ

Հայկական հնագիտության համար անկիննադարձային երեսոյթ մը հանդիսացաւ՝ Հայաստանի Հանրապետութեան Կոտայքի մարզի Քարաշամբ բնակավայրի շրջակայքը կատարուած պեղումներու ընթացքին, դրուագազարդ գաւաթի մը յայտնաբերումը հնագէտ Վահան Յովհաննիսեանի կողմէ 1987ին: Այս եզակի «գանձը» գտնուեցաւ միջին պրոնզէ-դարեան ժամանակաշրջանի իշխանաւորի մը դամբարանէն՝:

Արծաթեայ գաւաթի իրանը գլանաձեւ է, բարձրութիւնն է 13.2 սմ., լայնութիւնը՝ 10,6 սմ. եւ ծանրութիւնը՝ 215 կրամ:

Ք.ա. ԻԲ.-ԻԱ. դարերուն ստեղծուած այս գտածոն մկրտուեցաւ «Քարաշամբի Գաւաթ» անունով եւ ընդգրկուեցաւ Հայաստանի Պետական Պատմութեան Թանգարանի հաւաքածոյին մէջ՝ թիւ 2867-1 պիտակով:

Գաւաթին վրայ կը գտնենք վեց հորիզոնական գօտիներ, որոնց վրայ կան զանազան պատկերներ՝ առիւծներու եւ յովազներու շարք, վարազի որսի տեսարան, որսորդական շուն, նիզակակիրներ, սուներակիրներ, մարտի տեսարան, զինաթափուած գերիներ, պարտուածներու մահապատիժի տեսարան, ռազմական ասար, գլխատուած թշնամիներու գլուխներ, դիցաբանական առիւծագլուխ արծիւ, այծ մը յօշոտող առիւծ եւն.: Այս հարուստ պատկերները նիւթ կը պարունակեն այդ ժամանակաշրջանի ընկերային համակարգի, մշակոյթի մանրամասնութիւններուն եւ մասնատրապէս՝ տիրող դիցաբանական-առասպելաբանական ըմբռնումներուն մասին:

Հիմնական նիւթերէն զատ, Քարաշամբի Գաւաթը հարուստ տեղեկութիւններ կը պարունակէ այսպէս կոչուած «կողմնակի» նիւթերու մասին, օրինակ՝ սպառազինութիւն, կահոյք, հագուստեղէն, ծիսագիտութիւն, երաժշտագիտութիւն եւն.:

Իր առանձնայատկութիւններուն բերմամբ, Քարաշամբի Գաւաթը հին արեւելեան կիրառական արուեստի գլուխգործոց մը համարուած է մասնագէտներու կողմէ: Նկատի ունենալով թէ՛ դրուագազարդ գօտիներուն բովանդակութիւնը եւ թէ՛ մետաղամշակման որակը, ինչպէս նաեւ օգտագործուած գեղագիտական սկզբունքներու ամբողջութիւնը՝ գտածոն եզա-

կի երեսոյթ մըն է տարածաշրջանի հնագիտութեան պատմութեան համար:

ՔԱՐԱՇԱՄԲԻ ԳԱՒԱԹԻ «ԱՆԾԱՆՕԹ ԻՐԵՐԸ»

Երաժշտագիտութեան համար շատ կարեւոր են Քարաշամբի Գաւաթի երկրորդ գօտիին պատկերները: Այստեղ դրուագուած են երեք տեսարան՝ ծիսական արարողութիւն, զինուած ընդհարում եւ պարտուած թշնամիի գերեվարութիւն: Առաջին տեսարանին զխաւոր անձը գահին բազմած «մեծատը» մըն է (իշխա՛ն, թագաւո՛ր, աստուա՛ծ): Անոր դիմաց զոհասեղաններ կան՝ ծիսական անօթներով եւ արարողութեան սպասարկող քուրմերով: Քուրմերը արու եղջերու կը բերեն դէպի զոհասեղան որպէս զոհաբերումի կենդանի: Ծիսական այս արարողութիւնը կ'ամբողջացնեն «մեծատը»ին ետեւը տեղադրուած նուագաժու մը՝ քնարը ձեռքին, եւ երկու անծանօթ իրեր բռնած անձեր:

Մեր կարծիքով, այս 'անծանօթ իրեր'ը օդահունչներու (փչողական) ընտանիքէն երաժշտական գործիքներ են՝ անծանօթ տեսակի շեփորներ²:

Այս նուագարանները անտարակոյս օդահունչներ են, բայց չեն նմանիր Հայկական Բարձրաանդակի եւ շրջակայ տարածքի որեւէ հին կամ նոր նուագարանի: Ինքնին տարաշխարհիկ երաժշտական գործիքներու առջեւ կը գտնուինք: Ահա թէ ինչու նիւթին անդրադարձողները մեծ վերապահութեամբ մօտեցած են եւ, բացի նշելէ թէ անոնք պատկերուած են գաւաթի երկրորդ գօտիին վրայ, ո՛չ հնագէտները, ո՛չ արուեստաբաններ եւ ո՛չ ալ երաժշտագէտները ուրիշ խօսք կամ մեկնաբանութիւն ըրած են: Պարզապէս գաւաթը նկարագրելու ժամանակ խնդրոյ առարկայ շեփորները նշուած են իբրեւ «անծանօթ իրեր» կամ «հովահարներ» կամ ալ կասկածով՝ «փողային նուագարաններ (»)»:

Ընդհանրապէս, գաւաթի մասին շրջանառութեան մէջ եղած տեղեկութիւնները ուրիշ բան չեն, քան Յովհաննիսեանի 1988ի ռուսերէն աշխատութեան կից հայերէն ամփոփումին ընդօրինակումը կամ վերաշարադրումը³: Քիչ մը անելի ծաւալուն նկարագրութիւնները պարզապէս օգտուած են Յովհաննիսեանի բուն գրութենէն:

Ինչպէս նշեցինք, շատ քիչեր անդրադառնած են այս «անծանօթ իրեր»ու մանրամասնութեանց, մեծաւ մասամբ իբրեւ «հովահար»⁴ ներկայացնելով զանոնք, անշուշտ հետեւելով նոյն Յովհաննիսեանի աշխատութեան՝


За спиной «царя» изображены двое, повидимому, коленопреклонных слуг с * опахалами в правых руках⁵ - («Արքայի» պատկերին ետեւը, ըստ երեսոյթին, երկու ծնրադիր ծառաներ իրենց աջ ձեռքերուն հովահարներով):

Բայց ինչպե՞ս հովահարներ տեսնել երբ կարելի է անորոշութենէ փրկել այս «անծանօթ իրեր»էն գոնէ մէկը: Երկրորդ՝ այսինքն վարի նուագածով պարագային, յստակ կարելի է նշմարել գործիքէն դուրս ցցուող խողովակածեւ ծողիկ մը եւ այս ծողիկին հպած նուագածովի շուրթերը: Պարզ է, որ կը գտնուինք բերանոցի⁶ մը առջեւ: Իսկ եթէ կը գտնուինք բերանոցի մը առջեւ, ուրեմն դէպի վեր ներկայացուած մասը՝ աստիճանաբար լայնցող եւ մեծածաւալ փողայայնուկով աւարտող հին շեփորի մը նուագափողն է:

Առաջին նուագածովի բերանին մասը քիչ մը անորոշ է, բայց բոլոր միա տարրերը կը նմանին երկրորդին:

Այս փաստերուն ակնյայտութեան պատճառով, նոյն Յովհաննիսեանը իր առաջին աշխատութենէն չորս տարի ետք նոյն պատկերումներուն համար արդէն «... կարծես փողային նուագարաններ կը փչեն...»⁷ գրած է:

Յամենայն դէպս, կասկածները յարատեւած են այն աստիճան որ, օրինակ, Ֆրանսայի մէջ 1996ին տեղի ունեցած "Arménie des origines au IV^e siècle" մեծաշուք ցուցահանդէսին առիթով հրատարակուած գիրք-նշեցոյցին մէջ գրուած է՝ «... les deux autres soufflent (?) dans des instruments à vent (?) ...»⁸, այսինքն «... միա երկուքը կը փչեն(?) փողային գործիքներ(?)...»:



Փղոսկրեայ նուագափողով սիուա շեփորի գեղեցիկ օրինակ մը,

Լամու կղզիի թանգարան, Քենիա

ՔԵՆԻԱՅԻ «ՍԻՈՒԱ (SIWA) ՇԵՓՈՐԸ

Առեղծուածին բացայայտման սկիզբը կը գտնենք հայաշխարհէն շատ հեռու, Ափրիկէի մէջ: Քենիայի ափամերձ Lamu - Լամու եւ Pate - Փաթէ կղզիներու բնիկները, որոնք սուահիլի խօսող ժողովուրդներու զանգուածին կը պատկանին, կ'օգտագործեն բաւական տարաշխարհիկ օդահունչ մը, զոր սիուա - siwa կը կոչեն: Մեր կարծիքով, սիուաները եւ Քարաշամբի շեփորները գրեթէ նոյն կառուցուածքն ունին:

Սիուա շեփորները կը բաղկանան երեք հատուածներէ՝

1) աստիճանաբար լայնցող նուագափող

2) փչանցքի հատուած

3) ստորին հատուած

Առաջին հատուածը աստիճանաբար լայնցող գործիքին նուագափողն է, որ կը պատրաստուի մետաղէ՝ ընդհանրապէս արոյրէ։ Օգտուելով փիղերու ժանիքներու բնական կոր ձեւէն, գործիքը կը պատրաստուի նաեւ փղոսկրէ, մակերեսը գեղեցկացնելով երկայնակի ակօսներու քանդակումով։ Երկրորդ եւ երրորդ հատուածները պատրաստուած են արոյրէ կամ փայտէ, շատ գեղեցիկ տաշուած փորագրութիւններով։

Երկրորդ հատուածը շատ կարեւոր է, որովհետեւ հոն կը գտնուի փչանցքը։ Թէեւ սիուան բերանոցատր նուագարաններու ընտանիքին կը պատկանի, անոր բերանոցը անջատ բաղադրամաս մը չէ, այլ նոյն սնամէջ գլանածեւ երկրորդ հատուածին վրայ տաշուած բացուածք մը։ Իսկ երրորդ հատուածը միակտոր է եւ իր ծանրութեամբ կը հաւասարակշռէ ընդհանուր գործիքը։



Քարաշամբի գաւաթն ու շեփորահարները



*Երաժշտագիտութեան տեսանկիւնէն, այս նուագարանը կը պատկանի «բնական շեփոր»ներու ընտանիքին, որոնք հնարատրութիւն ունին արտաբերելու բնական հնչիւնաշարի ծայնաստիճանները։ Սիուան կողմնա-

յին փչանցքով բնական շեփոր մըն է, որովհետեւ բերանոց/փչանցքը տեղադրուած է ո՛չ թէ նուագարանի ա-ռանցքին վրայ այլ անոր աջ կողմը:

Այս ծիսական շեփորները կը գործածուէին Արեւելեան Ափրիկէի ծովեզերեայ շրջաններու եւ մերձակայ կղզիներու մէջ, մինչեւ ԺԹ. դարը, ազդարարելու համար կրօնական եւ տօնական այլեայլ գործողութիւններ, կամ վտանգի պարագային համայնքը զգուշացնելու համար: Հին ժամանակ, սիուան տիրող դասի իշխանութեան խորհրդանիշը եղած է, այն աստիճան

նուագածունները բարձր կարգավիճակ վայելելով, որ անոր կորուստը կառավարիչին համար իշխանութեան կորուստի համագոր էր:

Ներկայիս սիուաները պահպանուած են Լամու եւ Փաթէ կղզիներու մէջ, բայց կը գործածուին միայն ժողովրդական տօնախմբութիւններու ժամանակ⁹:

ՔԱՐԱՇԱՄԲԻ ԳԱԽԱԹԻՆ ՇԵՓՈՐՆԵՐԸ

Ձեռքի տակ ունենալով ափրիկեան սիուաներու մասին տեղեկութիւնները եւ Քարաշամբի գաւաթի պատկերները, կրնանք յստակացնել եւ յաւելել Քարաշամբի շեփորներուն մասին մեր պատկերացումները:

Ափրիկեան սիուաներուն պէս, Քարաշամբի շեփորներուն առաջին հատուածը աստիճանաբար լայնցող գործիքին նուագափողն է, որ կ'աւարտի մեծածաւալ փողալայնուկով: Ըստ քանդակուած պատկերներուն, նուագափողը սկսելով իր միջին մասէն պարոյկածեւ գալար մը կը կատարէ նախ դէպի վար եւ յետոյ դէպի վեր: Այսպէս, երբ ընդհանուր գործիքը դիտենք իր ամբողջութեամբ՝ մեծածաւալ պարոյկի ձեւ ունի ան:

«Քարաշամբի Գաւաթ»ը կը վերագրուի պրոնզէդարեան ժամանակաշրջանին, ինչ որ մեզի կը թելադրէ, որ շեփորի նուագափողին պատրաստութեան հաւանական նիւթը պրոնզը կրնայ եղած ըլլալ:

Երկրորդ կամ միջին հատուածը, ինչպէս նշեցինք, դուրս ցցուող խողովակածեւ ձողիկ մը կը կրէ որ հպած է նուագածուի բերնին: Պարզ է որ այս հատուածը սնամէջ է, հոն կ'ամրանան թէ՛ բերանոցը եւ թէ՛ նուագափողը, ապահովելով անհրաժեշտ օդային շրջանառութիւնը: Նուագածունները այս հատուածէն բռնած են Քարաշամբի մեծածաւալ շեփորները:

Քարաշամբի Գաւաթի շեփորները նուագելու դիրքը, ըստ պատկերման, եղած է հետեւեալը.- նախ գործիքը կը բռնէին միջին մասէն, պահելով զայն ուղղահայեաց դիրքով, նուագափողը դէպի վեր, իսկ գործիքի կորութեան կիզակէտը դէպի առաջ: Յետոյ կը բարձրացնէին զայն մինչեւ որ բերանոցը հասնէր նուագածուի շրթներուն: Գործիքը չէր տատաներ շնորհիւ ստորին մասի ծանրութեան հաւասարակշռող դերակատարութեան:

Դատելով գաաթի պատկերներու ընձեռած տուեալներէն, պարզ է որ Քարաշամբի շեփորները կ'օգտագործուէին բնոյթով կրօնաժխասական, մարտական եւ հանդիսաւոր ազդանշաններ կատարելու համար: Նուագարանին բարձր կարգավիճակը եւ պատուաւոր ըլլալը կը բխի գաաթի երկու նուագածուններուն տեղադրութենէն՝ ճիշտ «մեծաւորի» ետեւը: Նուագածունները այնպիսի ձեւով ներկայացուած են, որ կրնանք որոշ վստահութեամբ հաստատել, թէ «մեծաւորի» թիկունքի աջ եւ ձախ կողմերը կը գտնուին: Այս նուագածունները ո՛չ թէ ծառաներ պէտք է եղած ըլլան, այլ բարձրաստիճան անձնաւորութիւններ, որոնք շեփորները ձեռք պահած, պատուաւոր պահակներու պէս կանգնած են:

Քարաշամբի շեփորներն ալ կը պատկանին «բնական շեփոր»ներու ընտանիքին, հնարաւորութիւն ունենալով արտաբերել բնական հնչիւնաշարի ծայնաստիճաններ: Այս գործիքները պէտք է ունեցած ըլլան հզօր եւ ուժեղ ձայն:

Քարաշամբի շեփորները կը տարբերին ափրիկեան սիփաներէն որովհետեւ ունեցած են մեծ բերանոց մը, որ բաւական կը նմանի ժամանակակից **բերանոցաւորներու**¹⁰, շեփորներու¹¹, գալարափողերու¹², թրոմպոններու¹³ եւն.:

Պատկերները շատ փոքր են, եւ պարզ է որ մետաղագործ վարպետին դժուար եղած է իւրաքանչիւր բաղադրամաս ներկայացնել իր իսկական համաչափութեամբ, այդուամենայնիւ կարելի է գոնէ նուագարաններուն մօտաւոր չափերը պատկերացնել, նկատի ունենալով մարմին/նուագարան չափերու յարաբերութիւնը: Քարաշամբի շեփորները, ըստ մեր չափումներուն, մօտաւորապէս 1.40 մեթր երկարութիւն ունեցած են, գուցէ նաեւ քիչ մը անելի երկար՝ նկատի ունենալով գործիքին կորութիւնը եւ նուագափողին գալարը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Այս միջին պրոնզէդարեան երաժշտական գործիքը դարերու ընթացքին լիովին անհետացած է ամբողջ տարածաշրջանէն, ինչ որ դժուարացուցած է գաաթի պատկերներուն՝ առեղծուածային շեփորներուն էութեան բացայայտումը:

Ներկայիս, շնորհիւ բաղրատական նուագարանագիտութեան, կրնանք հաստատել, որ Քարաշամբի Գաաթի «անձանօթ իրեր»ը մեծածաւալ շեփորներ եղած են:

- ¹ В. Э. Оганесян, “Серебряный кубок из Карашамба” (Վ. Է. Յովհաննիսեան, Քարաշամբի արծաթէ գաւաթը), *Պատմաքանասիրական Հանդէս*, Երեւան, 1988:4, էջ 145-61:
- ² Շեփոր ներկայիս կը համապատասխանէ ֆր. trompette, գերմ. trompete, անգլ. trumpet, ռուս. труба, եւ այլ բառերու:
- ³ Յովհաննիսեան, էջ 161:
- ⁴ «Թագաւորի թիկունքին հովիարներ պահած երկու ծառայ եւ քնարահար նուագածու» (Wikipedia - Վիքիպեդիա՝ «Գաւաթ (մ.թ.ա. 22-21-րդ դարեր, Քարաշամբ)»):
- ⁵ Յովհաննիսեան, էջ 151:
- ⁶ Բերանոց՝ որոշ տեղեր նաեւ մունդշտուկ՝ գերմ. Mundstuck, ռուս. мунштук, անգլ. Mouthpiece:
- ⁷ V. E. Oganessian, “A Silver Goblet from Karashamb”, *Soviet Anthropology and Archeology*, 1992, էջ 84-102:
- ⁸ Jacques Santrot, *Arménie: Trésors de l'Arménie Ancienne, des Origines au IVe Siècle*, Nantes, Editeur Somogy, 1996, էջ 65:
- ⁹ R. R. Marett, “The Siwa in East Africa”, *Folklore Journal*, Vol. 25, No. 4, Dec. 31, 1914, London, էջ 499-500:
- ¹⁰ Բերանցատր՝ որոշ տեղեր նաեւ մունդշտուկատր:
- ¹¹ Շեփոր՝ տե՛ս ծնթ. 2:
- ¹² Գալարափող՝ ներկայիս կը նշանակէ ինչ որ իտալ. corno, ֆր. cor կամ cor d'harmonie, գերմ. Horn կամ Waldhorn, անգլ. French horn, ռուս. валторна եւն.::
- ¹³ Trombon (արեւելահայ. տրոմբոն):

RESOLVING THE ENIGMA OF THE KARASHAMP HORNS

(Summary)

ZAVEN KINASIAN

zavenkniasian@yahoo.com.ar

During an excavation in the Karashamb Village of Godayk District, Armenia in 1987, archeologist Vahan Hovhannssian discovered a silver rhyton which was immediately dated as a relic of the Bronze age. The relic, which was found in the tomb of a prince, was 13.2 cm. high, had a width of 10.6 cm. and weighed 215 grams.

Among its seven rows of s pictures one depicts a scene that shows two similar musical instruments. These have no similarity whatsoever with any of the traditional musical instruments of Armenia or the Caucasus, which made Hovhannisian describe them as "unfamiliar instruments". However, in a second article Hovhannisian considered them to be musical instruments.

Basing his conclusion on comparative musicology, the author finds a similarity between these instruments and the Siwa musical instrument of Kenya still in use during popular traditional celebrations on the islands of Lamou and Pate. The author concludes that the Karashamb musical instruments can be considered huge horns.